ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան 0010, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ,
Հեռ.՝+37491700974,**Էլ. հասցե՝**foi@foi.am, **www.foi.am**

21.08.2023
351-46

Քաղաքապետի առաջին տեղակալ,
քաղաքապետի պաշտոնակատար
ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Հովհաննիսյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել ՀՀ քաաքացի Արսեն Չալյանը՝ խնդրելով աջակցել տեղեկություն ստանալու հարցում: Սույն թվականի հուլիսի 3-ին ուղարկել է տեղեկություն ստանալու հարցում՝ խնդրելով տրամադրել տեղեկություններ վարչական տույժի արդյունքում բռնագանձված և Երևանի քաղաքապետարանին փոխանցված գումարի վերադարձի ընթացակարգի վերաբերյալ: Պատասխան գրությամբ սակայն Երևանի քաղաքապետարանը չի տրամադրել ներկայացված հարցերի պատասխանները: Քաղաքացի Չալյանը հուլիսի 10-ին ուղարկել է կրկնակի հարցում, որին ի պատասխան ստացված գրության մեջ ևս հարցերից և ոչ մեկին անդրադառձ չկա *(հավելված 1)*:

Ուստի համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Քանի՞ օրվա ընթացքում է կատարվում Երևանի քաղաքապետարանի օգտին բռնագանձված գումարի վերադարձը/փոխանցումը քաղաքացուն, եթե Հարկադիր կատարմումն ապահովող ծառայությունը վերացրել է նախկինում կայացրած կատարողական վարույթ հարուցելու, արգելանք դնելու և բռնագանձում կատարելու մասին իր որոշումները և տեղեկացրել է Երևանի քաղաքապետարանին այդ մասին:
2. Ի՞նչ իրավական հիմքով է որոշվում այն ժամկետը, որի ընթացքում իրականացվում է այդ վերադարձը/փոխանցումը:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան